

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՏԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային լուսավորության գործում Խաչատուր Աբովյանը մեծ փուլ էր փալիս գրականությանն ու արվեստին: Ռուս նշանավոր գրող Վ. Ժուկովսկուն գրած նամակում նա այն փեսակներն է արտահայտում, թե ոչ մի միջոցով չի կարելի «խսկական կրթության ու լուսավորության հասնել, բան գեղեցիկ արհեստների՝ բանաստեղծության, երաժշտության և նկարչության միջոցով»: Դա բացատրում էր արվեստի ու գրականության «երկնային, սիրտ ազնվացնող, հմայիչ ուժով»:

Գրեթե բոլոր ժանրերում էլ նա նոր խոսք է ասել, նորություններ բերել: Աբովյանի գրական ժառանգության մեջ բնորոշը ժողովրդայնության խնդիրն էր: Գրականությունը բոլորի սեփականությունը դարձնելու համար նա մշակեց մեր գրական լեզուն: Գրական լեզվի հիմքը դնելով՝ Աբովյանը չէր կարող իր առաջին ստեղծագործությունը կադրայալ դարձնել: Նրա ստեղծագործության մեջ փեսնում ենք հայ գրական լեզվի բոլոր փարքերը՝ **բարբառ, գրաբար, աշխարհաբար, ինչպես նաև որոշ իրողություններ օտար լեզվից**: Բարբառը, գրաբարը և օտար լեզուն նա համարում էր գրական լեզվի աղբյուրները: Այսօր նա հարկապես կարևորում է բարբառի, մասնավորապես Արարաբյան բարբառի դերը:

Նախադրելով գրաբարը և աշխարհաբարը՝ Աբովյանը ցույց է փալիս աշխարհաբարի կենսունակությունը: Նա նոր լեզվի հարցը կապում է նոր գրականության հարցի հետ և միաժամանակ կարևորում հարցի քաղաքական լինելը: Նա նկատում է, որ **ազգին պահողը լեզուն է**: «Նոր հայերենը գրաբարի հանդեպ ոչ միայն այն առավելությունն ունի, որ նա կենդանի կերպով ապրում է ժողովրդի բերանում, - գրում էր նա, - այլև այն, որ նրա քերականությունը վերին աստիճանի հեշտ է»<sup>1</sup>:

Խաչատուր Աբովյանը ստեղծել է նոր բովանդակությամբ հագեցած հարուստ և բազմաժանր չափածո. գրել է էլեգիաներ, ներբողներ, ձոներ, պոեմներ, խոհական բնույթի բանաստեղծություններ, սիրո և բնության երգեր, բայաթիներ:

Աբովյանը գտնում էր, որ նոր գրականությունը պետք է սնվի ժողովրդից, նրանից պետք է վերցնի գաղափարները, թեմաները, կենդանի ժողովրդական լեզուն ու ոճը: Գրականությունը մոտեցնել ժողովրդին, դարձնել նրա շահերի և զգացումների արտահայտություն, նրան լուսավորելու և քաղաքական գիտակցության բերելու գործն. այս էր նրա դավանանքը: Չափածո ստեղծագործություններում Աբովյանը օգտագործել է թե՛ արևելյան, թե՛ աշտուղական և թե՛ դասական տաղաչափության ձևերը: Դասական բանաստեղծության մեջ նա օգտագործել է գրաբարը, իսկ ժողովրդական մոտիվներում նախընտրել է աշխարհաբարը:

Նարուսյ էր նրա բանաստեղծական աշխարհը և արժեքավոր բանաստեղծական նոր դարաշրջանի սկզբնավորումով:

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1948, հ. 3, էջ 5:

Աբովյանի չափաձուն բացում է մեր առաջ գրողի հոգեկան և՛ իմացական աշխարհը և հայրենի երկրում՝ Դորպատ մեկնելուց առաջ, և՛ Դորպատում, և՛ հեղափոխության փառիններին: Բացում է մեր նոր գրականության՝ նոր պոեզիայի կազմավորման պարմական ընթացքը, որով նրա սրելոճագործությունը բաժանվում է զարգացման երեք շրջանների՝ **վաղ կամ նախադորպատյան շրջան** /1824-30 թթ./, **դորպատյան շրջան**/1830-36 թթ./, **հեղափոխության փառիններ** /1836-1848 թթ./: Առաջին բանաստեղծությունը նա գրել է 1824 թ.՝ «Կարոտություն նախնի վայելչությանց հայրենեաց իմոց»: Այսպես բանաստեղծը գովերգում է նախնիների փառքը, անհուն կսկիծով վերապրում հայոց մեծության անկումը: 19-ամյա բանաստեղծը պարսկական լծի փակ հեծող հայ ժողովրդին հիշեցնում է «անցեալ ի հին դարս հատուց մեր նախնի» և կոչ անում հեղինակ Վարդան Մամիկոնյանի օրինակին ու հայրենիքի փառքը փրկել արյամբ: Նա ապագային հղում է ցավագին մի հարց. «Ե՞րբ պեսցեն նեղեալ որդիք Արամեան յաշխարհի իրեանց լոյս խաղաղության»: Մեր առջև ռոմանտիզմի գրական ուղղությունն ու ոճը զբաժ հայրենախոս բանաստեղծն է: Այս շրջանի բանաստեղծություններից է «Մրբաճեմ...» ձոներգը, որը նվիրված է իր դաստիարակ Անտոն Եպիսկոպոսին: Աբովյանն այսպես օգտագործել է կյանքիստական ժանրաձևերից մեկը՝ ներբողը: Նա մերթ իր հոգին համարում է «զվարթ դրախտ»՝ «լի բարեօք մրգաց, հոսւ գգեղ շնորհաց», մերթ՝ երկնքի բարության «հողմ քաղցրագին», որ հալածում է «զխավար թխպագին մթաց», լուսին՝ «վանիչ խավարաց մթալից մրած»<sup>2</sup>: Սրան հաջորդող ներբողում՝ «Խնդամիսր զգացմունք երախտագեղ Նայկագին...», Աբովյանը խորացնում է իր առաջին բանաստեղծության ռոմանտիկական գրական կողմնորոշումը: Աբովյանի հերոսը՝ «երախտագեղ Նայկագին», որ ինքը՝ բանաստեղծն է, դարձել է հերոսականության ու ազատության պաթոսի մարմնացում: Գնահատում է հայրենիքի անկախության ու ազատության համար երած հերոսներին՝ Նայկ, Արամ, Արա, Թորգոմ, Արմենակ, Զարմայր: Գնահատում է Վարդանին և իր հերոսներին:

Նա այս ոճը շարունակում է և՛ դորպատյան շրջանում, և՛ հեղափոխության փառիններին գրած բանաստեղծություններում («Մուսր Նայկա ի Նայաստան», «Մրածմունք ի փեսին Նայրենյաց», «Դովապ առ սուրբ մայր աթոռն մեր Էջմիածին»): Մեկ այլ՝ «Ծաղիկք Արամյան...» ներբողում ներկայացնում է պարսկական դարավոր սրբության հեղինակությամբ սրելոճված ծանր իրականությունը և որոշակի է դարձնում իր քաղաքական միտումը. «Ա- րամյան ծաղիկք» «ցամաքեալ ու փռեթաղ», «Նայրենյաց որդին եղեալ փարագրի ըղձակաթ»: Մա մի պարկեր է, որով հեղինակը ներկայացնում է ժողովրդի ու հայրենիքի իրական վիճակը, մարմնացույց անում ցարական ճնշումը:

Այս շրջանի բոլոր բանաստեղծությունները գրված են գրաբարով, որպես ընտանական երանգով ներկայացվում են մարդու աշխարհային զգացողությունները, սերը, բնության, կարոտի ու վայելքի պարկերները: Աբովյանի բանաստեղծությունների զգալի մասը գրված է գրաբար լեզվով, բայց արժարժված են աշխարհիկ թեմաներ: «Վերք Նայաստանի» վեպում նա հրաժարվեց գրաբարից և անցավ աշխարհաբարի, իսկ չափաձոյում երկար ժամանակ աշխարհիկ թեմաներ էր արժարժում գրաբար լեզվով:

2 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Եր., 1948, էջ :

Դորպապյան շրջանի նախասիրած ժանրը չափածոն է: Երոպական և ռուսական գրականության ավանդների հիման վրա Աբովյանը զարգացրեց ժամանակակից գրական ուղղությունը: Այս տարիներին աստիճանաբար Աբովյանի ստեղծագործության լեզուն հակվում է դեպի աշխարհաբարը: Այս շրջանում նույնպես մեծ տեղ է գրում ժողովրդայնությունը: Ժողովրդի հայացքով է բանաստեղծը նայում իրականությանը: Աբովյանի դորպապյան բանաստեղծություններում գլուխ է բարձրացնում իր ժողովրդի ու հայրենիքի գոյատևման ու ինքնուրույնության հարցը: Աբովյանի իր ստեղծագործության դորպապյան շրջանը սկսել է թեմատիկ բազմազանություն ունեցող Էլեգիայով, որոնք արձարծում են մարդու և բնության, մարդու և հայրենիքի, քաղաքերգության հարցերը: «Ողբերգություն...», «Երագը իմ անցին...», «Ի Նրաբազնապ...», «Արհավիրք պանդխտության...» և այլ Էլեգիաներում հեղինակը ներկայացնում է իր հայրենիքը այս կամ այն առումով, նրա վիճակը, և թե ինչպես է վերապրում այդ ամենն ինքը՝ բանաստեղծը, ինչպես է ալեկոծվում նրա հոգեկան աշխարհը:

Եպորպապյան շրջանում աշխարհաբարը և ժողովրդայնությունը դառնում են Աբովյանի չափածոյի մայրուղին: Բանաստեղծը ցանկանում էր լուծել նոր լեզվի հարցը, որը «... Ինչպես մաքուր հայելու մեջ ցույց է մի ազգի առանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը»<sup>3</sup>: Նա ցանկանում էր խորթ ազդեցություններից ժողովրդական լեզուն մաքրել, գրաբարը դուրս մղել, ժողովրդի լեզուն դարձնել գրականության լեզու և մտցնել դպրոցները: Աբովյանը կարողացավ լուծել նոր լեզվի հարցը: «Նախաշավիղի» առաջին օրինակում հանդես եկավ հիմնականում գրաբար ուսանավորներով: Ինը ուսանավորներից յոթը գրաբարով էին գրված, սակայն այստեղ օգտագործված գրաբարը ավելի մոտ էր աշխարհաբարին. «գնաց հեռացա՛ր գիշերն մթագին» կամ «բացու՛ի առաուր քո լուսապայծառ»... Մյուսը աղոթքներ, բայց առավել ևս նոր բովանդակության բնարական երգեր են:

Աբովյանի չափածոյի հիմնական մտքովը հայրենասիրությունն է: Նա մարդու կյանքի նպատակը հայրենիքին, «ազգին» ծառայելն է համարել. մարդը պետք է պարտասրակամ լինի հայրենիքի համար գոհվելու: Նույնիսկ ամենավաղ շրջանի բանաստեղծությունը ցույց է տալիս, որ նրան հուզել են իր ժողովրդի բախարը, նրա վիճակը: Հայրենասիրությունը արտահայտվել է նաև պանդխտության թեմայով գրված բանաստեղծություններում:

Աբովյանը մեծ ուշադրություն է դարձրել ժողովրդական բանահյուսության և աշուղական չափածոյին: Նա հասկանում էր, որ բանահյուսությունն ու աշուղական չափածոն արտահայտում են ժողովրդի հույզերն ու փրամաղությունները, սիրելի են ժողովրդին: Ժողովրդական բանահյուսությունը նա կարևորեց հարկապես հայ նոր գրականության ստեղծման գործում: Ինչպես ինքն էր ասում, ժողովուրդը «հայիլ - մայիլ» լսում է աշուղներին:

Գրաբարով գրված որոշ բանաստեղծություններում նա օգտագործում է ժողովրդական և աշուղական երգերի հնարները: Նա բարձր է գնահատել հարկապես Մայաթ-Նովայի ստեղծագործությունը և նրա երգերի մտքովով գրել է «Ջանումս ջան չի մնաց...» բանաստեղծությունը.

Ջանումս ջան չի մնաց, որ անվալն քեզ ասեմ,

3 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1948, էջ :

Բերանս խոսք չէ գալիս, որ իմ խիստն քեզ ասեմ,  
Թուի ու թուիսանա ես սարքել, քանդեցիր բուրջ ու բադան,  
Քանի որ քեզ եմ պեսել, էրվեց, մաշվեց, ա՛խ, իմ ջանս:

Աբովյանը հեղափոխություն է նաև ժամանակի հայտնի աշուղների սրբազանությունը:  
Նա իր մի քանի բանաստեղծություններում նույնիսկ նշում է, թե որ աշուղի կամ որ երգի  
նմանությամբ է ինքը գրել / «Քեշիշ օղլու գունով», «Աշղ Ղարիբի հանգով» և այլն/:

Աբովյանի չափածոյի և ժողովրդական բանահյուսության սերտ կապի ապացույցն են  
նրա **բայաթիները**: Նա գրել է շուրջ 80 բայաթի, բոլորն էլ աշխարհաբար: Դրանք քնարա-  
կան չորստղանի ավարտուն քառյակ-բանաստեղծություններ են, որոնք չափազանց նման  
են ժողովրդական խաղիկներին, սակայն նրանից տարբերվում են մի առանձնահատկությա-  
մբ. առաջին և չորրորդ տողերի երկրորդ հարվածները կազմված են նույն բառից կամ բա-  
ռերից, բայց այնպես, որ տարբեր իմաստ են արտահայտում: Ինչպես ժողովրդական խա-  
ղիկները, այնպես էլ բայաթիները հարազատ են ժողովրդին: Բայաթին պարսկերեն բառ է,  
նշանակում է մեղեդի, ողբաձայն եղանակ: Բայաթիներում մենք տեսնում ենք մերժված սեր,  
կարոտ սիրած անձի նկարմամբ, կարոտ հայրենիքի նկարմամբ, մահվան անխուսափե-  
լիություն: Բայաթիների միջոցով նա ցանկանում էր գրականությունը մոտեցնել ժողովրդ-  
ին: «Բայաթիները են մարդով եմ գրել,-ասում է Աբովյանը,- որ չունի մեջլիսում, հացի վրա  
թուրքեվար են էսպես բաներ ասում. լավ հայր հայեվար ասի, որ քիչ-քիչ լեզուն քաղցրանա,  
չունի ոչինչ բան լեզուն էնքան չի քաղցրացնիլ, որքան խաղ ու տաղը: Նույս ունիմ, որ ուրիշ  
մարդիկ դեռ լավը շինեն»<sup>4</sup>:

Բայաթիները Աբովյանի հոգեկան խռովահույզ աշխարհի պոետական արտահայ-  
տություններն են: «Ո՛վ չի գիտի,- գրում է Աբովյանը,- որ մարդի սիրտը արնով լցվելիս՝ ո՛չ  
սուր էնքան քյար կանի, ո՛չ դեղ, ո՛չ քուն, ինչքան բառն ու խոսքը, ու իլլահիմ խաղը, բայա-  
թին»<sup>5</sup>:

«Արնով լցված» բայաթիների մեջ նա արտահայտել է իրեն հուզող զգացումները:  
Բայաթիների հիմնական մոտիվներն են սերը, հայրենասիրությունը, սոցիալական հակա-  
սությունները: Միտ թեմայով գրված բայաթիները լիրիկական են ու հոգեթով, նաև թախ-  
ծուր և գրված են ընթերցողին հասկանալի ու հարազատ լեզվով.

Սիրտս կաթել ա՛ր արին,  
Քո մարմինն եմ, քո արին,  
Ե՛դ արի, մեկ աչքովդ տե՛ս,  
Թե սիրելուդ ի՛նչ արին:

Բայաթիները ընթերցելիս նույնիսկ զարմանում ես՝ համեմատելով գրաբարով գրված  
նրա բանաստեղծությունների հետ: Այնքան հասկանալի ու պարզ են դրանք գրված, որ  
անմիջապես գրավում են ընթերցողի ուշադրությունը: Նոգեթով են հարկապես պանդխտ-  
ության թեմայով գրված բայաթիները, ուր հեղինակը ժողովրդին հարազատ լեզվով ներ-

4 Խ.Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1948, հ. 2, էջ 3:

5 Անդ:

կայացնում է հասարակության անարդար կարգերում ճնշված աղքատին, որը «ոչ օր ունի, ոչ մեկ բախր»: Նա թողել է քուն ու քնդ, մեկնել է պանդխտության և «ղարիք երկրում խորովվում է» հայրենիքի կարոտից:

Բայաթիներում Աբովյանը ներկայացնում է նաև քաղաքական մտրիվներ.

Անի, Անի, ախ Անի,

Քանդողիդ քունը քանդվի.

Քեզ որ ազգը չպահեց,

Մեկ սուր անող ի՞նչ անի:

Բայաթիների հիմնական մտրիվներից մեկը սերն է, մաքուր, ջերմ սերը, որը, սակայն, անպարասխան է մնացել, մերժվել և սրբակեղեք ցավի պարծառ դարձել: Քնարական հերոսը փնտրում է իր սիրածին, քանջվում նրան քնսնելու ցանկությամբ.

Ընկել եմ՝ ախ՝ սարեսար,

Դարման չունեմ, ոչ մեկ ճար:

Ուզում եմ գամ քո ուրը,

Առաջս ծով ա սար է սար:

Այս շրջանի քառյակներում մենք արդեն գործ ունենք ազգային գրական լեզվի

մշակվածության այնպիսի իրողության հետ, ուր հաղթահարվել են բարբառն ու գրաբարը: Գրաբարը ընդհանրապես բացակայում է, իսկ բարբառը որոշ չափով պահպանված է: Լեզուն մաքրվում է նաև օտար ազդեցությունից: Տեղ-քնդ երևացող «ա»-ի, երբեմն՝ «էս»-ի գործածությունը չի փոխում գրական լեզվի այն որակը, որին հասել է գրողը:

Քառյակներում թեման բազմաբովանդակ է՝ անհատի և հասարակության հակասություն, աշխարավոր ու խեղճ մարդու ճակարագիր, թույլի և ուժեղի սոցիալական բախում, սեր և փիլիսոփայություն: Եւ ամենակարևորը՝ քառյակները գրված են ընթերցողին հասկանալի լեզվով՝ աշխարհաբարով, իսկ լեզուն մշակված է, գերծ օտար ազդեցություններից: Քառյակներում շարք են օգտագործված մակդիրները, համեմատությունները և հակադրությունները՝ «ման եմ եկել մութնեմութ... իմ սիրտն էլ հո մութն է մութ», «ով ա լսել՝ սար սարի... ինձ մի անիր սարսարի», «ձին ա գալիս սարի գլխին... վայ քալիս՝ իմ չոր գլխին», «կանաչել են սար սար ու ձոր... թող սպանեն ինձ սար ու ձոր»: Նա ներկայացնում է մարդկային հուզաշխարհի և բնության գույների հակադրությունը: Մարդուն բնության մեջ դիպելը և նրա ներքին աշխարհը բնությամբ բացահայտելու քնարական մրաժողությունը Աբովյանը հասցրեց կարարելության՝ «Երկնքի կանաչ կարմիր, Ա՛յ սիրուն կանաչ կարմիր, Լերդս ու թոքս չորացել են, Սար ու ձոր կանաչ կարմիր»: Մեկի մռայլին հակադրվում է մյուսի գվարթ ու ծիծաղկոտ կանաչ կարմիրը: Կամ՝ «Արեգակն էլ որ բացվի, Իմ սիրտս հո մութն է մութ»:

Բնության և մարդու միջև սրեղծված հակադրությունը հանգեցնում է մարդու մահկանացության և բնության հավերժության փիլիսոփայության: Բնությունը ընդունակ է վերածնվելու, իսկ մարդը՝ ոչ. «Կանաչել են սար ու ձոր, Ձենս բարակ, սիրտս խոր», «Արեգակն էլ որ բացվի, Իմ սիրտս հո մութն է մութ»: Բնության թեմայի մեջ Աբովյանի քնարական հերոսը չի

վիժվում: Դարձյալ նրա ուշադրության կենտրոնում մարդն է, կարարյալ մարդու որոնումը, կարարյալի նկարմամբ ունեցած հավարը:

Բայաթիի՝ ամենահամառոր բանաստեղծական ձևի մեջ, խոր զգացումներ, բազմազան հարցեր արծարծելու Աբովյանի փորձը մնաց անզերագանցելի: Միայն 80 տարի անց Թումանյանը շարունակեց Աբովյանի ավանդները և մի նոր աստիճանի հասցրեց հայ քառյակագրությունը:

Խաչատուր Աբովյանի չափածոն նոր դուռ բացեց գրականության հեղափոխական ընթացքի համար, բացեց մեր առաջ գրողի հոգեկան ու իմացական աշխարհը, բացահայտեց նրա քաղաքական, հասարակական ու գրական հայացքները: Նազվադեպ է պարահում, երբ գրողը նոր դարագլուխ է բացում ժողովրդի հոգևոր կյանքում: Այդպիսին եղավ Խաչատուր Աբովյանը: